



ԿԿՈՒ

Մանկապատանեկան Թերթիկ

ԱՊՐԻԼ Բ - 2025
Թիւ - 14 -



Թիւր պատրաստեց՝
ՓԱԹԻԼ ԳԱՍԱԳԵԱՆ-ՎԱՐՈՒԳԵՏԵԱՆ
Նկարազարդեց՝
ՈՒՅՅԻ ՔԷՇԻՇԵԱՆ

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Այսօր ձեզի շատ հետաքրքրական տեղեկություններ պիտի պատմեմ Ճաղկազարդի մասին:

Ճաղկազարդը հեթանոսական շրջանէն եկած տօն է եւ յայտնի է Ծառզարդ, Ծառազարդ եւ Ճաղկազարդ անուններով, իսկ գիտե՞ք ինչ կը նշանակէ հեթանոսական շրջան: Այսինքն՝ այն ժամանակ, երբ հայերը դեռ քրիստոնէայ չէին եւ տարբեր բաներ կը պաշտէին, իսկ Ճաղկազարդը կապուած էր ծառ պաշտելու հետ:

Հայերը ժամանակին ծառ պաշտած եւ ունեցած են Կեւաց Ծառ, այսինքն՝ Կեանքի Ծառ, որ կը ներկայացնէ ծնունդէն մինչեւ ծաղկունք եւ պտղաբերութիւն նաեւ անմահութիւն կը խորհրդանշէ, իսկ նոր տարուան ծառը կը զարդարէին պտուղներով ու չիրերով, ապա Ծառազարդին կամ Ճաղկազարդին ծառը կը զարդարէին հաւկիթներու փունջերով: Իսկ գիտե՞ք Ճաղկազարդը երբ կը յիշատակուի: Ծաղկազարդը Սուրբ Չատիկէն մէկ շաբաթ առաջ կը յիշատակուի:

Ծառի հանդէպ սերը շարունակուեցաւ նաեւ քրիստոնէական շրջանին: Ծաղկազարդի առաւօտեան եկեղեցւոյ մէջ կ'օրհնեն ուռենիի, ձիթենիի եւ արմաւենիի ճիւղեր ու կը բաժնեն հաւատացեալներուն: Օրհնուած ճիւղերը տուն կը բերեն, որպէսզի չարիքներէն հեռու մնան եւ տարին բարիքներով լեցուն ըլլայ: Իսկ ինչո՞ւ ուռենիի, ձիթենիի եւ արմաւենիի ճիւղերը կ'օրհնեն:



Ճաղկազարդը նուիրուած է Յիսուս Քրիստոսի Երուսաղէմ մտնելուն: Խաչուելէն եւ Յարութիւն առնելէն առաջ Յիսուս Քրիստոս վերջին անգամ գնաց Երուսաղէմ, այնտեղ ժողովուրդը զինք դիմաւորեց մեծ ուրախութեամբ, որպէս փրկիչ: Շատեր անոր առջեւ արմաւենիի, ձիթենիի, ուռենիի ճիւղեր եւ նոյնիսկ իրենց հագուստները փռեցին եւ այդ ձեւով մարդիկ սերն ու հաւատքը արտայայտեցին Յիսուս Քրիստոսի նկատմամբ, որովհետեւ ան մարդկութեան մեղքերը իր վրայ վերցնելով չարչարուեցաւ եւ փրկեց մարդկութիւնը:

Ճաղկազարդին «Նուռ» անունով տիկնիկը անձրեւի հարսն էր: Տիկնիկը կը պատրաստէին հագուստներու աւելցած կտորներով եւ թելերով, խաչածեւ մարմնով, երկար սեւ մագերով, մեծ աչքերով, կարմիր հագուստով, գլխուն ծաղիկներով զարդարուած պսակով:

Ճաղկազարդին Նուռը եկեղեցի կը տանէին եւ աղօթքէն վերջ հոն կը ձգէին, որպէսզի տարին անձրեւաբեր ըլլայ:

Բարի Ճաղկազարդ:

ՁԱՅՆԱՒՈՐ ԲԱԴԻԿԸ

Բենիկը պզտիկ բադիկ մըն էր: Ան առտուընէ մինչեւ իրիկուն ագարակին մէջ ուազ-ուազ կը կանչէր ու կը պտըտէր:

-Ինչ կայ, Բենի՛կ, բան մը կ'ուզե՞ս,- կ'ըսէ մայր բադիկը:

-Ուազ-ուազ

-Ամէն անգամ որ ձայնդ կը լսեմ, կը կարծեմ որ օգնութեան պէտք ունիս: Կը վազեմ կու գամ, բայց կը տեսնեմ, որ միայն ձայն կը հանես:

-Ուազ-ուազ

-Սո՛ւս սո՛ւս, ձայն մի հաներ, ճուտիկներս պէտք է քնանան,- կ'ըսէ Զաւիկը:

-Ուազ-ուազ

-Լռէ՛, այնքան կը պոռաս, որ միջատները կը վախցնես. կը փախչին կ'երթան, ուտելիք չեմ գտներ, լուռ կեցի՛ր,- կ'ըսէ գորտիկը:

-Բենի՛կ, եկո՛ւր մեզի հետ պահուըտուք խաղցիր: Փխիկ դուն աչքերդ ցոցէ՛ ու հաշուէ՛,- կ'ըսէ խոզուկը:

-Մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութը, ինը, տասը, եկայ:

-Բենի՛կ, քեզ գտնելը շատ դիւրին է, քանի որ միշտ ձայն կը հանես.

կ'ըսէ փիսիկը:

-Ուազ-ուազ:

-Բենի՛կ, եկուր ճաշդ կե՛ր,- կ'ըսէ մայր բադիկը:

-Ուազ-ուազ:

-Բենի՛կ, գոնէ ուտելու ժամանակ ձայն մի՛ հաներ:

Բենիկը իրիկունը կը տեսնէ աղուէս մը, որ կը մօտենար ագարակին:

-Ուազ-ուազ, ուազ-ուազ:

-Այս ի՞նչ սիրուն հաւեր եւ ճուտիկներ ես,- կ'ըսէ աղուէսը, շատ անօթի եմ, քանի մը հատը բռնեմ եւ ուտեմ:

-Ուազ-ուազ, ուազ-ուազ:

Բենիկը իրար անցած կը վազվզէ ու ոտքը դոյլին կը դպչի:

-Այս ի՞նչ աղմուկ է, ինչ բարձր ձայն է, քանի հոգի ետեսես կը վազեն:

Փախչիմ, ազատիմ,- կ'ըսէ աղուէսը:

-Բենի՛կ դուն հերոս ես, ճուտիկներս ազատեցիր. ինչո՞ւ մէկը չեկաւ քեզի օգնելու,- ըսաւ հաւիկը:

-Ես Բենիկին պոռալը լսեցի, բայց կարծեցի, որ նորէն պարապ տեղը կը պոռայ, անոր համար չեկայ իրեն օգնելու,- ըսաւ շնիկը:

-Ես ալ լսեցի Բենիկին ձայնը, բայց տեղես չշարժեցայ, քանի որ միշտ ուազ-ուազ կը կանչէ, չգիտցայ որ այս անգամ վտանգ մը կար,- ըսաւ ձիուկը:

-Բենի՛կ հանած աղմուկդ աղուէսը փախաւ: Քոյրերդ եւ եղբայրներդ ազատեցիր, շնորհակալ ենք քեզի,- ըսաւ մայր բադիկը:

Իսկ բոլորը միաձայն ըսին:

-Ապրի՛ մեր հերոս բադիկը: Ապրի՛ մեր քաջ Բենիկը:

-Ուազ-ուազ:

-Բենի՛կ, կարծեմ յոգնած ես, քնանալու ժամդ հասած է, քովս եկո՛ւր:

Բենիկ մօրը թելերուն տակ մտաւ ու քնացաւ:



ՉԱՏԿՈՒԱՆ ԹՈՒԱԿԱՆԸ

Չատիկի տոնակատարության թուականի մասին գրուած է, թէ սկզբնական շրջանին Չատիկը կը տօնուէր Հրեաներու Պասեքի օրը:

Նիկիոյ ժողովին, 325 թուականին որոշուեցաւ կատարել Կիրակի օրը, եւ դարձաւ շարժական տօն: Հետագային, երբ տոմարը փոփոխութեան ենթարկուեցաւ, Ուղղափառ եկեղեցին հաւատարիմ մնաց Յուլեան տոմարին, որով 13 օրերու տարբերութեամբ կը կատարեն Չատիկը:

Չատիկը կը կատարուի գարնան գիշեր ու կը հաւասարի յաջորդող լուսնի լրման առաջին Կիրակի օրուան, այժմ կը տօնուի 21 Մարտէն մինչեւ 26 Ապրիլ եւ կը շարժի 35 օրերու միջեւ:

